ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԱՐՍՅԱՆ ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՍԻԳԱՐԵՏԻ ԵՎ ՍԻԳԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու,
պրոֆեսոր ԼԵՎՈՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ ԾՊՆԵՑՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ ՎԱՐԴՈՒՀԻ ԳԱԲՐԻԵԼԻ ԳՅՈՉԱԼՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հունիսի 8-ին, ժամը 14.00-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փողոց, 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թվականի ապրիլի 26-ին:

002 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հետազոտության արդիականությունն ու հրատապությունը: Բոլորին հայտնի է, որ ծխելը վնասում է առողջությանը, սակայն շատերը դեռ շարունակում են ծխել: Միջազգային վիճակագրության համաձայն, աշխարհում ամենաշատ ծխում են Կամբոջայում, Չինաստանում, աֆրիկյան որոշ պետություններում, Հնդկաստանում, Լատինական ամերիկյան երկրներում: 21-րդ դարում մոտ 1 միլիարդ մարդ ծխում է: Ընդ որում, նրանք ներկայացնում են ինչպես 3-րդ աշխարհի երկրները, այնպես էլ առաջավոր Եվրոպան, որտեղ ակտիվ կերպով քարոզվում է առողջ ապրելակերպը: Ծխողների այդպիսի մեծ քանակն ապահովում է ծխախոտի նկատմամբ մեծ պահանջարկ, որն էլ բավարարվում է սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների արտադրանքի միջոցով: Չնայած հակածխախոտային քարոզչությանը՝ ծխողների թվաքանակի կրճատումը տեղի է ունենում չափազանց դանդաղ: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս սիգարետ և սիգար արտադրողներին ավելի մեծ արտադրական հնարավորություններով ներկայանալ շուկայում: Սիգարետի և սիգարի ամենամեծ քանակությամբ վաճառքը տեղի է ունենում ԱՄՆ-ում, Չինաստանում, Ճապոնիայում, Ռուսաստանում: Սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում առավել հայտնի են ԱՄՆ-ն, Չինաստանը, Մեծ Բրիտանիան: Այս երկրների սիգարետի և սիգարի արտադրությանը բաժին է ընկնում սիգարետի և սիգարի համաշխարհային շուկայի մոտ 40 %-ը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ ամբողջ արդյունաբերական արտադրանքի մեջ ծխախոտային արտադրատեսակների արտադրության տեսակարար կշռով՝ 2010թ. 2%-ից այն 2019թ. հասել է 9.3%-ի: Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությունը երկրի համար ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալական նշանակություն: Ստեղծվել են հազարավոր աշխատատեղեր, որոշ չափով կրճատվել է գործազրկությունը:

Հետխորհրդային տարիներից ՀՀ-ում զարկ տրվեց սիգարետի և սիգարի արտադրության ձեռնարկատիրությանը: 2019թ. տվյալներով ոլորտում գործում է արդեն հինգ կազմակերպություն: ՀՀ-ում սիգաարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության հիմնախնդիրների վերհանումն արդիական է ՀՀ տնտեսության համար: Պաշտոնական տվյալների համաձայն, վերջին հինգ տարիներին ՀՀ-ից ամենաշատ արտահանվող երկրորդ ապրանքը սիգարետն է: Այս ոլորտի զարգացման անհրաժեշտությունը կարևորվում է ՀՀ հողային և աշխատանքային ներուժի առկայությամբ: Ոլորտի կազմակերպություններին ապահովելով տեղական հումքով, նվազեցնելով կախվածությունը ներմուծված հումքից և միջազգային փոխարժեքային տատանումներից՝ կլուծվի նաև ոչ միայն տնտեսական, այլև ՀՀ սոցիալական հիմնահարցերից մեկը՝ գործազրկության մակարդակի կրճատումը, այսինքն՝

հնարավորություն կստեղծվի, օրինակ, սահմանամերձ մարզերի բնակիչներին աշխատանքով ապահովել:

Առ այսօր ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ չկան լայնածավալ հետազոտություններ, բացահայտված չեն առկա հիմնախնդիրները, որով էլ պայմանավորված է ատենախոսության արդիականությունն ու հրատապությունը և թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է՝ մասնագիտական գրականության, միջազգային առաջավոր փորձի, ՀՀ վիճակագրական կոմիտեի և սեփական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին առնչվող ձեռնարկատիրական գործունեության հիմնախնդիրները, առաջարկել դրանց լուծման և արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները: Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել ձեռնարկատիրական մտքի զարգացման էվոլյուցիան, սկզբունքները, գործառույթներն ու շարժառիթները, ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը,
2. վերլուծել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը և հստակեցնել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրելու հեռանկարները,
3. հիմնավորել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին տեղական հումքով ապահովման կարևորությունն ու տնտեսական նշանակությունը,
4. ներկայացնել ՀՀ համախառն արտադրանքի և արտահանման մեջ սիգարետի և սիգարի տեսակարար կշիռը, ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրությունը որպես տնտեսության կարևոր ճյուղ դիտարկելու տնտեսական անհրաժեշտությունը, հիմնավորել ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և տուրքերի կառուցվածքում ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների առաջավոր և կարևոր դիրքերը,
5. կատարել 2010-2019թթ. ՀՀ-ում սիգարետի և սիգարի շուկայի վերլուծություն, հաշվարկել շուկայի տարողությունը, ինքնաբավության աստիճանը, կատարել ներմուծման և արտահանման ծավալների միտումների և տրենդների ուսումնասիրություն,
6. ներկայացնել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պետական կարգավորման ուղիները, ձեռնարկատիրական ռիսկերը և ներդրումային միջավայրի բարելավման ուղիները:

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող չորս կազմակերպությունները, նրանց արտադրատնտեսական գործունեությունը, ռեսուրսօգտագործման արդյունքները, ծխախոտագործության

հայրենական և արտասահմանյան առաջավոր տնտեսությունների ձեռնարկատիրության փորձը, ոլորտը կարգավորող իրավանորմատիվային ակտերը:

Ուսումնասիրությունների առարկան սիգարետի և սիգարի արտադրության զարգացումն ու արդյունավետության բարձրացումն է, կառավարման մոտեցումներն ու առանձնահատկությունները, որակի և անվտանգության միջազգային նորմերին համապատասխանությունը, արտաքին և ներքին առևտրի զարգացումը, ներմուծման և արտահանման հարաբերակցության ուսումնասիրությունը, ոլորտի ձեռնարկատիրական ռիսկերը, ձեռնարկատիրության զարգացման գործում առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը:

Հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Հետազոտության համար տեսական և գիտամեթոդական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից հետազոտությունները, պետական կառավարման մարմինների պաշտոնական օպերատիվ տվյալները, ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, համացանցային կայքերը, լրատվամիջոցների հրապարակումները և հիմնականում անձնական ուսումնասիրության արդյունքները:

Տեղեկատվության մշակման և օգտագործման նպատակով օգտագործվել է գիտական հետազոտության կանխատեսման, վերլուծության, տնտեսավիճակագրական, վերացարկման-տրամաբանական, համեմատական, հաշվեկշռային, հաշվարկակոնստրուկտիվ, մաթեմատիկական մոդելավորման ցուցանիշների համադրման եղանակները:

Աշխատանքի հիմնական արդյունքն ու գիտական նորույթը: Ատենախոսությունում իրականացված հետազոտություններն ու վերլուծությունները հանգեցրել են մի շարք գիտական արդյունքների, որոնցից գիտական նորույթ կարելի է համարել հետևյալները.

1. Կատարված համակողմանի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտվել են Հայաստանի Հանրապետության սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրները և դրանք պայմանավորող գործոնները:

2. Բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում սիգարի և սիգարետի արտադրության, արտահանման և ներմուծման դինամիկայի զարգացման տրենդները, ինչպես նաև ՀՀ ծխախոտի համախառն բերքի վրա ծխախոտի տարածությունների և բերքատվության մակարդակի ազդեցության աստիճանը և տրվել է դրանց տնտեսաչափական գնահատականը:

3. Հայաստանի Հանրապետության սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրների և ոլորտի զարգացման ռեսուրսային ներուժի համակողմանի գնահատման ու վերլուծության հիման վրա մշակվել են ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները:

Ատենախոսության գիտական և գործնական արդյունքները, որոնք հիմնականում հրատարակված են հանրապետության գիտական տարբեր հանդեսներում, կարող են օգտակար լինել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների տնտեսական գործունեության և կառավարման հիմնախնդիրներն առավել խորությամբ հետազոտողների համար, հիմնախնդիրների հնարավոր այլընտրանքային լուծումների օգտագործման, ոլորտում ձեռնարկատիրական ռիսկային իրավիճակների բացասական ելքերի կանխատեսման և կանխարգելման, մասնագիտական կադրերի ուսուցման ու պատրաստման, ներդրումային նոր բազայի ստեղծման գործում:

Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության ուսումնասիրման վերաբերյալ հետազոտությունների արդյունքները հնարավորություն կտան կանխատեսել հնարավոր տնտեսական ցուցանիշների փոփոխությունները, պլանավորել տնտեսությունների կարողությունների արդյունավետ օգտագործումը, նպատակ հետապնդելով բնական ռեսուրսների առավելագույն խնայողաբար օգտագործման ճանապարհով հասնել առավելագույն եկամտաբերության: Սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում, որտեղ առհասարակ բացակայում է որևէ իրատեսական տեղեկատվություն, բիզնես ծավալել ցանկացողներին կօգնեն գնահատելու դժվարությունները, ռեսուրսների պահանջը, ներդրումային ռիսկերը, տնտեսական արդյունավետությունը: Առաջարկությունները կարելի է օգտագործել ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններում, նաև ՀՀ-ում ծխախոտագործության զարգացման վերաբերյալ ռազմավարական քաղաքականություն մշակելու և ծրագրերի իրականացման ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները հանրային քննարկմանն են ներկայացվել հեղինակի կողմից հրատարակված 8 գիտական հոդվածներում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ու Ագրարային Էկոնոմիկայի ամբիոնների համատեղ նիստում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, «Եզրակացություններ» բաժնից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքը շարադրված է 148 էջի վրա: Ատենախոսությունը պարունակում է 14 աղյուսակ, 3 նկար և 10 գծապատկեր (հավելվածների աղյուսակները ներառված չեն):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, ստացված արդյունքների գիտափորձնական նշանակությունը, գիտական նորույթը և նշանակությունը:

<u>Ատենախոսության առաջին՝ «Ձեռնարկատիրության զարգացման տեսական և մեթոդական հիմքերը» գլխում</u> ներկայացված են ձեռնարկատիրության տեսությունն ու մտքի զարգացման հազարամյակների պատմությունը նախնադարից մինչ ժամանակակից տեսությունները, ձեռնարկատիրության սկզբունքները, գործառույթներն ու շարժառիթները, ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը և սիգարետ ու սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության միջազգային փորձը:

Ձեռնարկատիրական գործունեությունն ուղղված է հասարակական պահանջմունքների բավարարմանը, սակայն նրա անմիջական նպատակը, բուն շարժառիթը նյութական շահն է, որն արտահայատվում է առավելագույն շահույթ ստանալու ձգտումով: Այս իմաստով տնտեսավարման պրակտիկայում ձեռնարկատիրությունը նույնացվում է «բիզնես» հասկացության հետ:

Ընդհանուր առմամբ, ձեռնարկատիրական գործունեության բոլոր գործառույթները գտնվում են փոխկապակցության մեջ, սակայն դրանց արդյունավետ գործելու հիմնական նախապայմաններից են պետական աջակցության և իրավական դաշտի ապահովումը, ձեռնարկատիրության կարգավորման մեխանիզմների առկայությունը և այլն:

Ձեռնարկության և ձեռներեցի գործունեությունը կարգավորվում էր նախկինում «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքով[1], իսկ այժմ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով[2], «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» օրենքով[3], օրենսդրական այլ ակտերով, ձեռնարկության կանոնադրությամբ և այլ հիմնադիր փաստաթղթերով, ինչպես նաև պայմանագրերով: Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ կանոններ, քան պարունակվում են սույն օրենքում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի կանոնները:

Այսպիսով, ձեռնակատիրական գործունեությունը շահավետ նախաձեռնողական տնտեսական գործունեություն է, որը հիմնված է սեփական կամ փոխառու միջոցների վրա և ուղղված է դրանց առավել արդյունավետ օգտագործման շնորհիվ շահույթի ստացմանը: Ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսավարման եղանակ է, որին բնորոշ է նախաձեռնությունը, նորարարու-

---

[1]Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին ՀՀ օրենք, 14.03.1992 թ

[2] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք ,ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 17, Տիգրան Մեծ, Եր, 1998 թ., էջ 6:

[3] Անհատ ձեռնարկատիրոջ մասին ՀՀ օրենք, Ընդունված է 2001 թվականի ապրիլի 3-ին

թյունը, տնտեսական պատասխանատվությունը, ճկունությունը և կոմերցիոն ռիսկը:

Ձեռնարկատիրության արդյունավետության գնահատման սկզբունքների և մեթոդների մշակման համար անհրաժեշտ է հստակ սահմանել «արդյունավետություն» և «արդյունք» (ռուսերեն՝ «эффективность» и «эффект») հասկացությունները: Այն, որ այս կատեգորիաներն ունեն միևնույն ուղղությունը, ակնհայտ է: Եվ արդյունքը, և արդյունավետությունը արտացոլում են որևէ երևույթի մեջ տեղի ունեցող որակական փոփոխություններ՝ բերելով քանակական փոփոխությունների: Արդյունավետությունը սերտորեն կապված է հենց որակական փոփոխությունների հետ: Ատենախոսության մեջ սահմանված են «արդյունք» և «արդյունավետություն» հասկացությունների հիմնական բնորոշումներն ու տեսակները:

Այսպիսով, ինչպես արդեն նշվեց, միայն մեկ ցուցանիշի միջոցով հնարավոր չէ ամբողջությամբ գնահատել ձեռնարկատիրական գործունեության բոլոր կողմերը: Ձեռնարկատիրական գործունեության արդյունավետութունը գնահատվում է մի շարք ցուցանիշներով, ընտրում են դրանցից կարևորագույնները, որոնց համալիր վերլուծությունը միայն կտա ձեռնարկության արդյունավետության մասին հստակ պատկեր:[4]

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում «Ֆիլիպ Մորիս Ինտերնեյշնլ» ընկերության օրինակով:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Ձեռնարկատիրության զարգացման առանձնահատկությունները և առկա հիմնախնդիրները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում» գլխում</u> ներկայացված են սիգարետի և սիգարի արտադրության առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը ՀՀ-ում, սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության վերլուծությունը, սիգարետի և սիգարի ներքին ու արտաքին շուկաների առանձնահատկություններն ու վերլուծությունը :

Պատմական աղբյուրների վկայությամբ սիգարետի արտադրությունը Հայաստանում մինչև Խորհրդային կարգերի հաստատումը մեծ զարգացում չի ունեցել: Իսկ Խորհրդային տարիներին ծխախոտագործության զարգացումը բացառապես սպառողական նշանակություն ուներ: 2018թ. ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող չորս խոշոր ընկերություններ կան «Գրանդ Տոբակո» ՍՊԸ, «Ինտերնեշնլ Մասիս Տաբակ» ՍՊԸ, «Մասիս Տաբակ» ՍՊԸ և «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ ընկերությունները: Ընդ որում, վերոնշյալ առաջին երեք ընկերությունները պատկանում են Գրանդ Հոլդինգին, որը ՀՀ ամենամեծ կորպորացիան է:

[4] Сафронова Н. А., Экономика предприятия, Москва, 2001, стр. 537

Աղյուսակ 1.

ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական ցուցանիշները 2016-2019թթ. [5]

Կազ.. անունները	Տարեթիվ	Հանձնված արտադրանք, մլն դրամ	Արտադրության վերադարձից հետո, մլն դրամ	Աշխատողների միջին թիվը, մարդ	Աշխատանքի արտադրողականությունը, մլն դրամ	Աշխատավարձի տարեկան ֆոնդը, մլն դրամ	Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձը, դրամ	Արտադրության լրիվ ինքնարժեքը, մլն դրամ	Շահույթ մինչև հարկումը, մլն դրամ	Հիմնական գործունեության-ից շահույթ, %
ՄԱՍԻՍ ՏՈԲԱԿՈ	2016	2764	2553	369	7.5	612	138.2	2423	130	5.4
	2017	1755	1651	401	4.4	660	137.2	1575	76	4.8
	2018	2271	2172	456	5.0	816	149.1	1877	295	15.7
	2019	2680	2614	466	5.7	1089	194.7	2412	202	7.7
Ի. Մ. Տ.	2016	55023	54148	1481	37.1	3012	169.5	52253	1895	3.6
	2017	64770	64166	1644	39.4	3396	172.1	61718	2448	3.9
	2018	71240	70048	2003	35.7	4776	198.7	68476	1572	2.3
	2019	74350	72821	2518	29.5	6150	203.5	70553	2268	3.1
ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ	2016	58010	57314	1128	51.4	2664	196.8	53881	3433	6.4
	2017	63456	63356	1239	51.2	3012	202.6	60723	2633	4.3
	2018	68475	67323	1384	49.8	3780	227.6	65080	2243	3.4
	2019	76322	74530	1375	55.5	4133	250.5	71523	3007	4.0
ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ	2016	2850	2685	141	20.2	324	191.5	2329	356	15.3
	2017	4280	4036	168	25.6	492	244.0	3368	668	19.8
	2018	5446	5285	181	30.1	552	254.1	4377	908	20.7
	2019	6980	6773	271	25.7	905	278.3	5928	845	12.5

Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից հրապարակած տվյալների, 2016, 2017 և 2018 թվականներին «Գրանդ Տոբակո»-ն հարկ վճարողների ցանկում երկրորդ հորի-զոնականն է զբաղեցրել՝ զիջելով 2016-2017թթ. «Գազպրոմ Արմենիային», իսկ

[5] taxservice.com , Կազմակերպությունների ֆինասնատնտեսական փաստաթղթեր 2016-2019 թթ (ռեզիդենտների շահութահարկի հաշվարկ)

2018թ.՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին: 2019թ. «Գրանդ Տոբակո» ՍՊԸ-ն նորից գլխավորել է ՀՀ հարկատուների ցանկը:[6]

ՀՀ բյուջե հավաքագրված հարկային եկաուտների և տուրքերի ընդհանուր տեսակարար կշռում ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություն-ները մեծ մասնաբաժին ունեն: Այս հանգամանքը պայմանավորված է ինչպես տվյալ արտադրության ծավալների մեծությամբ և մեծաթիվ աշխատողների աշ-խատավարձից վճարվող եկամտային հարկի մեծությամբ, այնպես էլ ներկայում ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի բարձր դրույքաչափերով:[7]

Ուսումնասիրելով ծխախոտի ցանքատարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2014-2019 թթ. ըստ մարզերի՝ 2015 թ. 2014 թ. համեմատ ծխախոտի աճեցման տարածությունները աճել են մոտ 14%, իսկ 2016թ.՝ 20.3 %-ով կրճատվել: Ծխախոտ աճեցման տարածությունների տարեց տարի կրճատումը դեռ շարունակվում է: 2018թ. ծխախոտի աճեցման տարածու-թյունները 2014թ. նկատմամբ կրճատվել է 23%-ով, սակայն բերքատվությունը մնացել է գրեթե նույնը: Ստացված ցուցանիշներն ահազանգ են ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար, քանի որ գրեթե միայն սիգարետի միջուկային (կմախքային) հումքն է աճեցվում ՀՀ տարածքում:

ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեության արդյունավետության վերլուծության համար աղյուսակ 1-ում ներկայացված են վերը նշված կազմակերպությունների 2016-2019 թթ. ձեռնարկատիրական գործունեության հիմնական արտադրական և տնտեսական ցուցանիշները:

Ըստ 2016-2019թթ. ՀՀ-ում բոլոր սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները աշխատել են շահութաբեր: Հաշվարկվել է հիմնական գործունեությունից շահութաբերության մակարդակն ըստ արտադրության ծախսերի: Շահութաբերության ամենաբարձր մակարդակը՝ 20.7 գրանցվել է «ՍՊՍ Սիգարոն» կազմակերպությունում 2018թ., քանի որ վերջինս իրականաց-նում է գնային «սերուցքային» քաղաքականություն:

Ամենաբարձր միջին ամսական աշխատավարձը 2019 թ. «ՍՊՍ Սիգարոն» կազմակերպությունում է՝ 278300 դրամ, քանի որ այստեղ աշխատում են հատուկ վերապատրաստում և բարձր որակավորում ունեցող անձինք: Իսկ ամենացածր միջին աշխատավարձը «Մասիս Տոբակո» ՍՊԸ-ում է 2017թ.՝ 137200 դրամ: «Գրանդ Տոբակո», «Ինտերնեշնլ Մասիս Տաբակ» և «Մասիս Տոբակո» կազմա-կերպությունները աշխատաշուկայում բավականին մեծ պահանջարկ են ներկա-յացնում: «Գրանդ Հոլդինգը» 2016թ. ունեցել է 2978 աշխատող, 2017թ.՝ 3284, 2018թ.՝ 3843: 2016-2018թթ. Գրանդ Հոլդինգը ապահովել է աշխատատեղերի 432 տարեկան միջին աճ: 2019թ. 2016թ. համեմատ ոլորտում գործող կազմա-

[6] petekamutner.am

[7] Պարսյան Ա. Հ., Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների կողմից հարկվող հարկերն ու տուրքերը ՀՀ-ում: // «ԱՅԼԸՆՏՐԱՆՔ», գիտական հոդվածներ, 2017#3, էջ 108:

կերպությունների աշխատողների միջին ցուցակային թիվը ավելացել է 48.4%, որը պայմանավորված է կազմակերպությունների համախառն արտադրանքի տարեցտարի ավելացմամբ: Որպես ՀՀ-ում բնակչության զբաղվածության և սոցիալ տնտեսական խնդիրները մեղմելու հարցի այլընտրանքային լուծում՝ սա բավականին բարձր ցուցանիշ է:

Առայժմ աշխարհում ամենաշատ վաճառվող ապրանքներից մեկը սիգարետն է, որի արտադրությունը առավել շահավետ է: ՀՀ-ում սիգարետի և սիգարի շուկայում ներկայացված են ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ ապրանքանիշեր: Չնայած այն հանգամանքին, որ ծխախոտը բացասաբար է անդրադառնում ծխողների և շրջապատի մարդկանց առողջության ու ընտանեկան բյուջեի վրա, չի կարելի անտեսել այն փաստը, որ Հայաստանի բնակչության մոտ երկու հինգերորդը կանոնավոր կերպով օգտագործում է ծխախոտային արտադրանք:

Ըստ ՀՀ մաքսային ծառայության հրապարակած տվյալների՝ 2017թ. 2376.6 մլն ԱՄՆ դոլար կազմող ընդհանուր արտահանման ծավալում սիգարետն ու սիգարը կազմել է 243.6 մլն ԱՄՆ դոլար (10.2%), իսկ 4182.4 մլն ԱՄՆ դոլար կազմող ընդհանուր ներմուծումից՝ 37.9 մլն ԱՄՆ դոլար (0.9%): 2018թ. 2407.0 մլն ԱՄՆ դոլարի չափով ընդհանուր արտահանման մեջ 266.2 մլն ԱՄՆ դոլար սիգարետն ու սիգարն է (11.1%), իսկ 4965.0 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ներմուծման մեջ 43.2 մլն ԱՄՆ դոլար՝ 0.9% տեսակարար կշռով: 2016-2018թթ. ՀՀ-ից սիգարետի և սիգարի արտահանումը ավելացել է 36%-ով, իսկ ներմուծումը՝ 49%-ով: 2018թ. սիգարետը ՀՀ-ից ամենաշատը արտահանվող ապրանքներից է հանդիսանում: 2018թ. սիգարետի արտահանումը երկրի ընդհանուր արտահանման տեսակարար կշռում կազել է 11.1%, իսկ ներմուծման տեսակարար կշռում՝ 0.9%[8]:

Մեր կողմից իրականացվել է 2016-2019թթ. սիգարետ և սիգար արտադրող հիմնական կազմակերպությունների համախառն արտադրանքի գործոնային վերլուծությունն ըստ հիմնական միջոցների և ֆոնդահատույցի, ըստ շրջանառու միջոցների և շրջանառելիության գործակցի:

[8] https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIExportStatistics Մաքսային տեղեկատվություն, արտահանման և ներմուծման վիճակագրություն

Գծապատկեր 1. ՀՀ-ում սիգարի և սիգարետի արտադրության ու արտահանման ծավալների դինամիկան 2010-2019թթ., մլն հատ[9]



Գծապատկեր 2. ՀՀ-ում սիգարի և սիգարետի ներմուծման ծավալների դինամիկան 2010-2019թթ., մլն հատ

[9] Պարենային ապահովություն և աղքատություն, վիճակագրական տեղեկագիր, ԵՐԵՎԱՆ-2019, էջ 76

Ըստ «Պարենային ապահովություն և աղքատություն» տեղեկագրի մեթոդի ներկայացվել է սիգարետի և սիգարի արտադրության ու արտահանման ծավալների դինամիկան, ներմուծման ծավալների աճի և նվազման միտումները և հաշվարվել է շուկայի տարողությունը, ինքնաբավության և ներմուծումից կախվածության աստիճանը (գծապատկերներ 1, 2, 3, 4)[10]:

Չնայած սիգարետն ու սիգարը չեն հանդիսանում պարենային ապրանք, դրանց տեսակարար կշիռը չի կարելի անտեսել բնակչության ծախսերի կառուցվածքում: 2004-2019թթ. ըստ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցի տվյալների տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքում ծխախոտին բաժին է ընկնում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական 808-ից 1653 դրամ[11]:

Գծապատկեր 2-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ-ում սիգարների ներմուծման ծավալները տարեկան կրճատվել են 202.6 մլն հատով, սակայն դրանք ունեցել են արագացման աճի տեմպեր, որի արդյունքում 2014թ. սկսած նպաստել են ներմուծման ծավալների աճին:



Գծապատկեր 3. ՀՀ-ում սիգարի և սիգարետի շուկայի տարողությունը 2010-2019թթ., մլն հատ

[10] Parsyan **A.**, Parsyan S., Hambardzumyan **A.**, Manukyan R., Cigarette and Tobacco Manufacturing Sector in the Economic System of Armenia and its Development Peculiarities, Agriscience and technology, ANAU, 2020, p. 43-48

[11] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական-վերլուծական զեկույց, ԵՐԵՎԱՆ-2018, էջ 134

Հաշվարկները ցույց են տվել, որ ՀՀ-ում 2019թ. 2010թ. համեմատ սիգարետի շուկայի տարողությունը ավելացել է 2810.9 մլն հատով կամ 50.5 %-ով: Հարկ է նշել, որ 2013-2014թթ. ՀՀ-ում սիգարետների ներմուծման ծավալների կրճատմամբ պայմանավորված, սիգարետների շուկայի տարողությունը կրճատվել է 172.3 մլն հատով կամ 3.68 %-ով:

Գծապատկեր 4-ի վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում սիգարետների ինքնաբավության աստիճանը 2010-2016թթ. աճել է չափազանց մեծ տեմպերով՝ 60.4 %-ից հասնելով մինչև 407.3%: 2017-2018թթ. գրանցվել է այս ցուցանիշի նվազում: 2018թ. 2016թ. նկատմամբ այն նվազել է 34.8 տոկոսային կետով, իսկ 2017թ. նկատմամբ՝ 24.9 տոկոսային կետով՝ դառնալով 372.5%, որը հիմնականում պայմանավորված է եղել ՀՀ հարկային և մաքսային քաղաքականությամբ:

Գծապատկեր 4. ՀՀ-ում սիգարետների ինքնաբավության և ներմուծումից կախվածության աստիճանները 2010-2019թթ., %

2019թ. նկատվում է ինքնաբավության և ներմուծումից կախվածության աստիճանի կտրում աճ: Հաշվարկները ցույց են տվել, որ ՀՀ-ում 2010-2013թթ. ավելացել է սիգարի և սիգարետի ներմուծումից կախվածության աստիճանը՝ 51.2%-ից հասնելով մինչև 64.0%-ի: 2014թ. գրանցվել է ներմուծումից կախվածության աստիճանի նվազում: 2018թ. 2013թ. համեմատությամբ ցուցանիշը կրճատվել է 26.9 տոկոսային կետով, իսկ 2017թ. համեմատությամբ՝ 5.2 տոկոսային կետով՝ հասնելով մինչև 37.2 %-ի: 2019թ. 2013թ. համեմատությամբ ցուցանիշը կրճատվել է 21.4 տոկոսային կետով:

Ատենախոսության երրորդ՝ «Ձեռնարկատիրական գործունեության հիմնահարցերը ու դրանց լուծման հիմնական ուղղությունները ՀՀ սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում» գլխում ներկայացված են ոլորտի պետական կարգավորման ուղիները, ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման կատարելագործման գործիքները և ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները:

Առանձնակի ուշադրության են արժանանում պետական կարգավորում և պետական կառավարում հասկացությունները: ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ձեռնարկատիրության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը կապված է հարկային, վարկային, ֆինանսավորման, մաքսային համակարգերի արդյունավետ գործունեության հետ: Սակայն ՀՀ-ում հարկային քաղաքականության որոշ տարրեր ոչ միայն չեն նպաստում ձեռնարկատիրության զարգացմանը, այլև արհեստական խոչընդոտներ են ստեղծում որոշ ոլորտներում գործող կազմակերպությունների համար:

Որպես ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պետական կարգավորման միջոցառումներ մեր կողմից առաջարկվում են՝

1. Հաշվի առնելով սիգարետի և սիգարի արտադրությունում որակյալ տեղական հումքով կայուն մատակարարման հիմնախնդիրը՝ ուսումնասիրվող բնագավառում ձեռնարկատիրության զարգացմանը կարող է նպաստել հումքի մշակության և դրա վերամշակման գործընթացում տնտեսավարողներին աջակցության մեխանիզմների կիրառումը: Դա կարող է իրականացնել ՀՀ-ում այժմ գործող «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մեխանիզմներով: Ծրագրի հիմնական նպատակը ՀՀ-ում գործող գյուղատնտեսական մթերքներ վերամշակող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումն է: Գործող ծրագրով նախատեսված չէ սիգարետի հումքի և դրա վերամշակման ոլորտի աջակցությունը:

Առաջարկվում է գործող ծրագրում կատարել համապատասխան լրացում կամ ընդունել նոր ծրագիր, որը նոր գործիքակազմով նպատակաուղված կլինի ծխախոտի հումքի գնման պայմանագրերի հիման վրա հումքի գնման համար տոկոսադրույքների սուբսիդավորմամբ նպատակային վարկերի տրամադրմանը:

2. Պետական կարգավորման ու սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների հումքային բազայի ստեղծման համատեքստում առաջարկվում է իրականացնել հումք աճեցնող ֆերմերիների ու գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների համար նախատեսված պետական աջակցության նաև այլ ծրագրեր՝ հենվելով սիգարետի և սիգարի արտադրության միջազգային փորձի վրա:

3. Հաշվի առնելով սիգարետի և սիգարի արտադրության բնագավառում տեխնիկական զինվածության բարձր մակարդակը, դրանց նորացման և վերազինման հրատապությունը, դիտարկվող բնագավառում ձեռնարկատիրության զարգացման կարևորագույն միջոցներից մեկը կարող է լինել որոշակի մատչելի մեխանիզմներով տեխնիկայի մատակարարման ծրագրերի իրականացումը:Ներկայումս գործում է «ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիրը[12], որի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է:

4. Ուսումնասիրելով ծխախոտի հումքի աճեցմամբ զբաղվող տնտեսվարողների և ոլորտում գործող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության հիմնախնդիրները, մեր կողմից առաջարկվում են պետական աջակցության հետևյալ ուղղությունները՝ հումք աճեցնող ֆերմերիների ու գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների համար նախատեսված հատուկ պետական աջակցության ծրագրեր, ծխախոտի սելեկցիա, բարձր պահանջարկ ունեցող ծխախոտի սորտերի փորձարկում և շրջանառում, ծխախոտի սերմերի և սածիլների մատչելի պայմաններով տնտեսավարողներին տրամադրում (մասնավորապես՝ տարաժամկետ վճարման և գների սուբսիդավորման պայմաններով):

5. ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ձեռնարկատիրության պետական կարգավորման համակարգում կարևոր տեղ է տրվում մրցակցային միջավայրի ընդլայնմանը, որի համար որոշիչ նշանակություն ունի պետության հակամենաշնորհային քաղաքականությունը:

ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պետական կարգավորման և ձեռնարկատիրական աջակցության գերխնդիր է ապրանքի հասարակայնորեն ճանաչումը:

6. Առաջարկվում է պետության կողմից մշակել և ներդնել սիգարետն ու սիգարը ազգային բրենդ դարձնելուն ուղղված հատուկ գործիքակազմ: Պետական բոլոր միջոցառումները ՀՀ-ում և արտերկրում կարելի է օգտագործել ազգային բրենդի առաջմղման նպատակով՝ անուղղակի արտաքին կահավորում, գովազդ, աքսեսուարների առկայություն, պետական հրավերներ, հյուրասիրություն ու համտես և այլն:

ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական ռիսկերը հիմնականում հանդես են գալիս արտադրական, կոմերցիոն և ֆինանսական ռիսկերի տեսքով: ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները առնչվում են վերը նշված

[12]old.minagro.am/link-pages, ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշում

ձեռնարկատիրական ռիսկերի բոլոր ենթատեսակների հետ: Ատենախոսության մեջ մեր կողմից առաջադրվել է վերը նշված ձեռնարկատիրական ռիսկերի հաղթահարմանն ուղված միջոցառումների համակարգ:

ՀՀ սննդարդյունաբերությունում ներդրումային միջավայրի կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման նպատակով կան մի շարք գիտական ուսումնասիրություններ: Ներդրումային ռիսկերի երաշխիք առաջարկվել է պահուստային ու սեփական կապիտալի, նաև ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության գործակից, որը տատանվում է 5-15%՝ կախված ստանձնած պարտավորությունների ռիսկայնության աստիճանից:[13]

ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական ռիսկերի հաղթահարման այլընտրանքային լուծում մեր կողմից առաջարկվում է *պահուստային և սեփական կապիտալի ու ընդհանուր պարտավորությունների հետևյալ հարաբերակցության ապահովումը* (գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պահուստային կապիտալի մասնաբաժինը սեփական կապիտալում 2016-2019թթ.

ՀՀ որոշ կազմակերպություններում պահուստային կապիտալի մասնաբաժինը կամ չափազանց փոքր է, կամ ընդհանրապես բացակայում է: Սակայն պատկերն այլ է ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններում: Կազմակերպության ֆինանսական կայունության տեսանկյունից նպատակահարմար է համարվում, երբ պահուստային կապիտալը կազմում է սեփական կապիտալի 10 %-ից ավելին: Ներդրումային գործունեության

[13] Մելիքյան Զ. Վ., Ներդրումային միջավայրի բարելավման հիմնախնդիրները ՀՀ սննդարդյունաբերության ոլորտում, Սեղմագիր, Ը.00.02, էջ 15-16, Երևան-2020:

հետ կապված պահուստային հատկացումներին արված շահաբաժինը որոշելիս, ձեռնարկատիրական ռիսկերը մեղմելու նպատակով մեր կողմից առաջարկվում է հաշվարկել նաև պահուստային կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցությունը, որը նպատակահարմար կլինի տատանվի 5-15%՝ պայմանավորված ստանձնած պարտավորությունների ռիսկայնության աստիճանով:

Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու անհրաժեշտ պայման է ներդրումային միջավայրը: Ներդրումներն ունեն տնտեսական և սոցիալական վիթխարի նշանակություն: Ներդրումների շնորհիվ ստեղծվում են աշխատատեղեր, կրճատվում է գործազրկությունը (սոցիալական նշանակությունը): Ներդրումները նաև նպաստում են տնտեսական աճին (տնտեսական նշանակությունը):

Սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում կատարվում են իրային և ֆինանսական ներդրումներ: Իրային են կոչվում այն ներդրումները, որոնք կատարվում են սարքավորումներ և հիմնական միջոցներ ձեռք բերելու նպատակով: Ֆինանասական ներդրումների օբյեկտը սովորաբար ֆինանսական գործիքներն են՝ արժեթղթերը: Եթե փորձենք տարբերակել իրային և ֆինանսական ներդրումները, ապա առաջինում կատարած ներդրումներն իրային բնույթ ունեն, իսկ երկրորդում՝ ֆինանսական:

ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ներդրումների *օբյեկտներ* են նոր գործարկվող, վերազինվող, վերակառուցվող և ընդլայնվող հիմնական միջոցները, սեփականության նոր օբյեկտները, գիտատեխնիկական արդյունքները, ինտելեկտուալ սեփականության իրավունքները, իսկ ներդրումների *սուբյեկտ* են ոլորտում գործող կազմակերպությունները:

ՀՀ սիգարետի և սիգարի շուկայում նախքան ներդրումներ կատարելը անհրաժեշտ է *կանխատեսել շուկայի գրավչությունը բնութագրող ցուցանիշները* և, եթե դրանք դրական ուղղվածություն ունեն՝ կա կայուն պահանջարկ, առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, շուկան հեռանկարային է, ապա շուկան դառնում է գրավիչ:

ՀՀ-ում սիգարետի և սիգարի շուկայի ներդրումային գրավչության բարձրացման նպատակով առաջնային խնդիրներից է ոլորտում գործող կազմակերպությունների կազմակերպահրավական կարգավիճակի փոփոխությունը, որպեսզի նոր ներդրողը հնարավորություն ունենա ներդրումներ անել տվյալ կազմակերպություններում: Բաժնետոմսեր և պարտատոմսեր թողարկելով՝ այդ փոփոխությունը նոր ներդրումների հնարավորություն կստեղծի կազմակերպությունների համար:

Այսօր ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները ներդրումներ անում են միայն սեփական և փոխառու միջոցներով:

Ներդրումների կառավարման գործում շատ կարևոր է նաև գնահատել ներդրումների տնտեսական արդյունավետությունը: Ցանկացած ներդրումային

ծրագիր ենթակա է իրագործման, եթե արդյունավետ է: Ներդրումների տնտեսական արդյունավետությունը գնահատելու համար կիրառվում են ցուցանիշներ, որոնք կառուցվում են արդյունքներ-ծախսեր հարաբերակցության տրամաբանության վրա:

ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ներդրումների բացարձակ գնահատմամբ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է «Մասիս Տոբակո»-ում 2018թ., սակայն դա պայմանավորված է ոչ միայն կազմակերպության ներդրումային քաղաքականությամբ, այլև մարքեթինգային: 2016-2019թթ. ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության ընթացքում ներդրումների ծավալը տարեցտարի ավելանում է: Ֆինանսական դժվարություններով պայմանավորված 2016-2017թթ. «ՍՊՍ Սիգարոն» ՍՊԸ-ում ներդրում չի արվել: Ներդրումների արդյունավետության ցուցանիշը բնութագրում է միավոր շահույթին բաժին ընկնող ներդրումները, որի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2018-2019թթ. «Մասիս Տոբակո» ՍՊԸ-ն, որի հետևանքով կազմակերպության ներդրումների հետգնման ժամկետները շատ կարճ են:

Աղյուսակ 2.

Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական ցուցանիշների էկոնոմետրիկ մոդելավորում 2013-2019թթ.

Կազմ.	Էկոնոմետրիկ մոդելը	Կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցները	Մոդելի նշանակալիության գնահատականը
Մասիս տոբակո	$\hat{Y} = 26.9K^{0.03}L^{0.706}$	$R = 0.882$, $R^2 = 0.779$	$F = 7.01$
Ինտեր. Մասիս Տաբակ	$\hat{Y} = 76.9K^{0.199}L^{0.629}$	$R = 0.985$, $R^2 = 0.971$	$F = 64.8$
Գրանդ Տոբակո	$\hat{Y} = 0.89K^{1.162}L^{1.382}$	$R = 0.928$, $R^2 = 0.862$	$F = 12.5$

$$F_{crit(\alpha=0.05;k1=2;k2=4)} = 6.94$$

2016-2019թթ. ընթացքում «Մասիս Տոբակո» կազմակերպության, չնայած ներդրումների ծավալը կտրուկ նվազել է, սակայն ներդրումների շահութաբերությունը կտրուկ աճել է ի հաշիվ արտադրական ծախսերի նվազման: 2016-2019թթ. ընթացքում «Ինտերնեշնլ Մասիս Տաբակ» կազմակերպության և ներդրումները, և ներդրումների շահութաբերությունը գրեթե մնացել են անփոփոխ: Գրեթե նույն պատկերն է «Գրանդ Տոբակո» ընկերության գործունեության ընթացքում: 2016թ. «ՍՊՍ Սիգարոն» ընկերությունը կարողացել է ոչ մեծ ներդրումներով ապահովել

98.1 ներդրումային շահութաբերության գործակից: Սակայն 2017-2018թթ. այլևս ներդրումներ չեն գրանցվել:

Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական նպատակներից է արտադրության ծավալների աճը, որը ապահովվում է ներդրումային գործընթացների անընդհատության և դրանց արդյունավետ օգտագործման պայմաններում:

Մակրոմակարդակում, ինչպես նաև առանձին կազմակերպության առումով տնտեսական աճի ժամանակակից տեսությունների համար կարևոր նշանակություն է ունեցել երկգործոնային արտադրական ֆունկցիայի՝ Քոբբ-Դուգլասի մոդելը, որը արտադրության ծավալի աճը կախվածության մեջ է դնում «աշխատանք», «կապիտալ» գործոններից:[14] Չ.Քոբբի (1875-1949թթ.) և Փ.Դուգլասի (1892-1976թթ.) «Արտադրության տեսություն» աշխատությունը (1928թ.), որտեղ նրանք հիմնավորեցին արտադրության ծավալների (Y), կապիտալի (K) և աշխատանքային ծախսումների (L) միջև ոչ գծային կախվածությունը.

$Y = AK^{\alpha}L^{\beta}$ (1), որտեղ՝

Y - կազմակերպության համախառն արտադրանք է.

K - կազմակերպության իրականացված ներդրումների ծավալներն են,

L - կազմակերպությունում իրականացված աշխատանքային ծախսումներն են (աշխատողների թիվը),

$A; \alpha; \beta$ - մոդելի պարամետրերն են,

$\alpha; \beta$ - համապատասխանաբար կապիտալ ներդրումների և աշխատանքային ծախսումների (աշխատողների թվի) մասնակի էլաստիկության գործակիցներն են,

A - բնութագրում է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ հատույցը:

Սույն վերլուծության նպատակն է կիրառելով Քոբբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան՝ ՀՀ-ում սիգար սիգարետ արտադրող խոշոր կազմակերպություններում գնահատել համախառն արտադրանքի ծավալները՝ կախված իրականացված ներդրումներից և աշխատողների թվից: Վերլուծությունն իրականացվել է աղյուսակ 1-ի 2013-2019թթ. տվյալների հիման վրա:

«Սիգարոն ՍՊՍ»-ի առումով վերլուծություն չի կատարվել, քանի որ 2017-2018թթ. ներդրումներ չեն իրականացվել: Աղյուսակ 2-ում ներկայացված վերլուծության արդյունքների համաձայն 2013-2019թթ. «Մասիս տոբակ» ՍՊԸ-ում ուսումնասիրվող գործոնների միջև ձևավորվել է ուժեղ կապ ($R = 0.882$), իսկ կառուցված մոդելը կարելի է համարել նշանակալի

[14] Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), խմբ.՝ տ.գ.դ., պրոֆ. Գ.Ե. Կիրակոսյանի և տ.գ.թ., պրոֆ., Ի.Ե. Խլղաթյանի. - Եր., Տնտեսագետ, 2009. – 752 էջ, էջ 575

($F = 7.01 > F_{crit(\alpha=0.05;k1=2;k2=4)} = 6.94$): Ըստ կառուցված մոդելի, 2013-2019թթ. «Մասիս Տոբակո» ՍՊԸ-ում ներդրումների մեկ տոկոսի ավելացման հետ զուգահեռ համախառն արտադրանքն ավելացել է 0,03%-ով, իսկ աշխատողների թվի մեկ տոկոսով ավելացման հետ զուգահեռ համախառն արտադրանքն ավելացել է 0,706%-ով: Համաձայն հաշվարկված դետերմինացիայի գործակցի ($R^2 = 0.779$), ուսումնասիրվող տարիներին կազմակերպությունում համախառն արտադրանքի տատանումների շուրջ 77,9%-ը պայմանավորված էին մոդելում ընդգրկված գործոններով, իսկ մնացած 22,1%-ը այլ և պատահական գործոնների ազդեցությունն է:

2013-2019թթ. «Ինտեր Մասիս Տաբակ» ՍՊԸ-ում ուսումնասիրվող գործոնների միջև ձևավորվել է շատ ուժեղ կապ ($R = 0.985$), ուսումնասիրվող գործոնների միջև կառուցված մոդելը նշանակալի է ($F = 64.8 > F_{crit(\alpha=0.05;k1=2;k2=4)} = 6.94$): Կառուցված մոդելի համաձայն, ուսումնասիրվող տարիներին կազմակերպությունում ներդրումների մեկ տոկոսով ավելացումը համախառն արտադրանքն ավելացրել է 0,199%-ով, իսկ աշխատողների թվի մեկ տոկոսով ավելացումը համախառն արտադրանքն ավելացրել է 0,629%-ով: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ 2013-2019թթ. «Ինտեր. Մասիս Տաբակ» ՍՊԸ-ի համախառն արտադրանքի տատանումների շուրջ 97,1%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոնների համատեղ տատանումներով, իսկ մնացած 2,9%-ը՝ այլ և պատահական գործոններով ($R^2 = 0.862$):

«Գրանդ Տոբակո» ՍՊԸ-ում 2013-2019թթ. համախառն արտադրանքի, ներդրումների ծավալի և աշխատողների թվի միջև ձևավորվել է շատ ուժեղ կապ ($R = 0.928$): Նշված ցուցանիշների միջև կառուցված մոդելը կարելի է համարել նշանակալի ($F = 12,5 > F_{crit(\alpha=0.05;k1=2;k2=4)} = 6.94$) : Համաձայն կառուցված էկոնոմետրիկ մոդելի, 2013-2019թթ. «Գրանդ Տոբակո» ՍՊԸ-ում ներդրումների ծավալների մեկ տոկոս աճը հանգեցրել է համախառն արտադրանքի 1,162%-ով աճին, իսկ աշխատողների թվի մեկ տոկոսով ավելացումը նպաստել է 1,382%-ով աճին: Հաշվարկված դետերմինացիայի գործակցի համաձայն, ուսումնասիրվող տարիներին կազմակերպությունում համախառն արտադրանքի ծավալների տատանումների շուրջ 86,2%-ը պայմանավորված է մոդելում ընդգրկված գործոններով, իսկ 13,8%-ը՝ մոդելում չընգրկված և պատահական գործոններով:

Կատարված էկոնոմետրիկ վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ 2013-2019թթ. ուսումնասիրվող կազմակերպություններում համախառն արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված է աշխատողների թվի ավելացմամբ: Այնուամենայնիվ, ի տարբերություն «Մասիս Տոբակ» ՍՊԸ-ի, «Ինտեր. Մասիս Տաբակ» և «Գրանդ Տոբակո» կազմակերպություններում իրականացված ներդրումները հանգեցրել են համախառն արտադրանքի

ավելացմանը, քանի որ 2013-2019թթ. «Մասիս Տոբակ» ՍՊԸ-ում ներդրումներն ունեցել են նվազման միտումներ:

Այսպիսով, կարելի է նշել, որ չնայած այս ոլորտում դեռևս առկա են մի շարք չլուծված հիմնախնդիրներ, սակայն սիգարետի և սիգարի արտադրությունը ՀՀ վերամշակող արդյունաբերության դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է, որն ունի զարգացման լայն հեռանկարներ:

Այսպիսով, ունենալով ներդրումների ծավալների կրճատման խնդիր՝ ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները պետք է ուշադրություն դարձնեն հետևյալ հիմնահարցերին. ներդրումների ֆինանսավորման նոր աղբյուրներ գտնել, ապահովել ներդրումների նվազագույն ռիսկայնությունը, ստեղծել ապահովագրական ֆոնդեր հնարավոր ճգնաժամային տատանումներից խուսափելու համար, դիֆերենցված ներդրումային պորտֆել ստեղծել, ուշադրությունը կենտրոնացնել ոչ միայն հայտնի ապրանքանիշների, այլև նորերի վրա, միաժամանակ աշխատել շուկայի մի քանի սեգմենտների համար և այլն:

Այսպիսով, կարևոր է ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում կատարվող ներդրումների տնտեսական և սոցիալական նշանակությունը: Ստեղծվում են նոր աշխատատեղեր, նվազում է գործազրկության մակարդակը, տեղի է ունենում զբաղվածության մակարդակի բարձրացում, ապահովում է տնտեսական աճ, ավելանում են բնակչության աշխատանքային և գործարարությունից ստացվող եկամուտները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շուկայական հարաբերությունների հաստատումն ու սեփականաշնորհման գործընթացները նպաստեցին նախկին փլուզված պլանային տնտեսակարգի մնացորդների հիման վրա նոր ձեռնարկությունների ձևավորման համար: 2019թ.տվյալներով ՀՀ-ում գործում են սիգարետ և սիգար արտադրող հինգ կազմակերպություն:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արտադրատնտեսական գործունեությունը, նրանց ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները, արվել են համապատասխան եզրակացություններ, առաջ են քաշվել առկա հիմնախնդիրները, տրվել են հիմնախնդիրների լուծման այլընտրանքային տարբերակներ: Որպես ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության արդյունավետության բարձրացման գործիքակազմ մեր կողմից առաջարկվել են հետևյալ հայեցակարգերը՝

1. Այս կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունը ուղղակիորեն կապված է սիգարետի և սիգարի հումքի արտադրության (ծխախոտագործության), մշակման, չորացման տեխնոլոգիաների հետ: Ծխախոտ մշակաբույսի աճեցումը այսօր կարող է դառնալ ՀՀ գյուղատնտեսության եկամտաբեր ճյուղերից մեկը, որի համար ՀՀ-ն ունի համապատասխան հողային և աշխատանքային ներուժ: Առաջարկվում է ավելացնել ծխախոտի աճեցման հողատարածքները և զարգացնել ծխախոտագործությունը:
2. Որպես ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրության արդյունավետության բարձրացման գործիքակազմ մեր կողմից առաջարկվում է բարձրացնել ոլորտում գործող կազմակերպությունների մասին հանրային իրազեկումը:
3. Առաջարկվում է ՀՀ-ում իրականացնել սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության *պատասխանատվության ապահովագրություն:* Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պատասխանատվության ապահովագրության էությունը կայանում է նրանում, որ ապահովադիրները, վճարելով ապահովագրավճար, ապահովագրողներին են փոխանցում երրորդ անձանց իրենց կողմից հասցված վնասի փոխհատուցումը:
4. Առաջարկվում է ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման մի շարք միջոցառումներ: Շուկայական տնտեսական համակարգում տնտեսական որոշումներ կայացնում և դրա համար տնտեսական պատասխանատվություն են կրում ոչ միայն տնտեսվարող սուբյեկտները, այլև՝ պետությունը:

➢ ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպություններին տեղական հումքով ապահովելու նպատակով սիգարետի հումք արտադրող գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ներգրավել պետական

աջակցության ծրագրերում՝ ցածր տոկոսադրույքներով գյուղատնտեսական վարկերի և անվճար սածիլների տրամադրում, սկսնակ ֆերմերներին անվճար խորհրդատվություն, ծխախոտ աճեցնելու համար բարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող մարզերում հողի պետական պահուստային ֆոնդերի ֆերմերներին տրամադրմամբ անվճար կամ ցածր վարձավճարներով: Առաջարկվում է նաև պետական ապահովագրության համակարգի ներդնում:

➢ Պետության միջամտության անհրաժեշտությունն է առաջանում նաև սիգարետի և սիգարի հումքի շուկայում գնի ձևավորման ժամանակ: Քանի որ սիգարետի և սիգարի շուկան այսօր մոնոպսոն է, այսինքն, արտադրողները շատ են, իսկ գնորդները հիմնականում չորսն են: Առաջարկվում է պետության կողմից սահմանել սիգարետի և սիգարի հումքի գնի վերին և ստորին շեմ: Ուշագրավ է, որ ծխախոտի արտադրությունը տնտեսությաան եկամտաբեր ճյուղերից է: Սա մի կողմից կապահովագրի տնտեսվարող սուբյեկտներին որոշակի տնտեսական ցնցումներից, մյուս կողմից հումք արտադրող գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին թույլ կտա սեփական արտադրանքը վաճառել համեմատաբար կայուն գներով, այլ ոչ թե թելադրված գնորդի կողմից:

➢ Առաջարկվում է սիգարետի և սիգարի ազգային բրենդինգի ստեղծում: Մեր գնահատմամբ պետական աջակցությամբ և հովանավորությամբ հայկական սիգարետն ու սիգարը յուրովի կդիրքավորվի արտաքին շուկայում և նոր հնարավորություններ կստեղծի հայրենական արտադրության զարգացման համար:

➢ Մեր կողմից առաջարկվում է վերանայել նաև արդեն գործող մի քանի պետական աջակցության ծրագրեր: Մասնավորապես, գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի արդեն գործող ծրագրերը:

5. *Ապրանքի և արտադրության կատարելագործում որպես արտադրական ռիսկերի կառավարման կատարելագործման գործիք,* այսինքն, այս հայեցակարգով ընտրած ընկերությունների ղեկավարությանն առաջարկվում է ռազմավարական նախապատվությունն տալ արտադրության նորացմանը և բաշխման ուղիների գործունեության արդյունավետության բարձրացմանը:

6. *Մարքեթինգային և առևտրային ջանքերի ինտենսիվացում որպես կոմերցիոն և ֆինանսական ռիսկերի կառավարման կատարելագործման գործիք,* այսինքն, ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունները զգալի աշխատանքներ են տանում իրացման և վաճառքի խթանման ոլորտում, քանի որ ներկայիս մրցակցային շուկայում սպառողները չեն գնի այն ընկերության արտադրանքը, որը չի իրականացնում հատուկ միջոցառումներ շուկա ապրանքի առաջմղման և լայնամասշտաբ վաճառքի ուղղությամբ:

ՀՀ-ում սիգարետի և սիգարի շուկայի ներդրումային գրավչության բարձրացման և ռիսկերի կառավարման կատարելագործման նպատակով առաջնային խնդիր-

ներից է ոլորտում գործող կազմակերպությունների կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխությունը, որպեսզի նոր ներդրողը հնարավորություն ունենա ներդրումներ անել տվյալ կազմակերպություններում: Բաժնետոմսեր և պարտա-տոմսեր թողարկելով՝ այդ փոփոխությունը նոր ներդրումների հնարավորություն կստեղծի կազմակերպությունների համար:

7. Կարևոր ենք համարել նաև սիգարետի և սիգարի արտադրության *տեխնոլոգիական գործընթացը*, քանի որ ծխախոտի որակը հիմնականում կախված է ապրանքի արտադրության տեխնոլոգիայի ճիշտ պահպանումից, իսկ ներկայումս մրցակցային շուկայի պայմաններում մրցակցային առավելության հասնելու հիմնական և կարևոր նախապայմանը ապրանքի որակն է: Այդ խնդրի հաջող լուծումը մեծապես կախված է բարձր բերքատու և որակյալ հումք ապահովող սորտերի, ծխախոտի աճեցման և տերևների հետքաղյա մշակման առաջավոր եղանակների, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կիրառումից, համապատասխան կադրերի առկայությունից, որոնք հետազոտություններ կատարելով առավել ճշգրիտ տեղեկություն կապահովեն տեղի պայմաններում ծխախոտի առավել բարձրորակ սորտերի մշակմն ընտրության հարցում: Հատկապես առաջարկվում է թանկարժեք սիգարետի և սիգարի արտադրության ժամանակ օգտագործել երկրորդ բերքահավաքի տերևները, քանի որ դրանք առանձնանում են իրենց բարձր որակական հատկանիշներով , հասունությամբ և նիկոտինի թնդությամբ:

8. ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է բարձր որակավորում ունեցող անձնակազմ՝ հոսքագծերը, արտադրական և օժանդակ ենթակառուցվածքները սպասարկող արհեստավարժ մեխանիկներ, էլեկտրական սարքեր սպասարկող ինժեներներ, փականագործեր, էլեկտրիկներ և ինժեներատեխնիկական մի շարք այլ մասնագետներ:

9. Ուսումնասիրելով ՀՀ-ում սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների ձեռնարկատիրական հնարավոր ռիսկերը՝ մեր կողմից առաջարկվում է ռիսկերի հետևանքների հաղթահարման երաշխիքներ ստեղծել պահուստային և սեփական կապիտալ կայուն հարաբերակցությամբ: Մեր կողմից հաշվարկվել են դրանց հարաբերակցությունը 2016-2019թթ. ընթացքում և տրվել գնահատականներ: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ պահուստային կապիտալի ավելացումը կազմակերպություններում հնարավորություն կտա լուծելու իրավիճակային անհապաղ խնդիրները, և նոր միջոցներ հայթայթելու կարիք արդեն չի առաջանա:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի 8 գիտական հոդվածներում.

1. ՀՀ ծխախոտագործական ձեռնարկությունների արտաքին և ներքին շուկաների վերլուծություն, «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ», Գիտական հոդվածներ, 2016/2(45), 298-303 էջ:
2. Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների պատասխանատվության ապահովագրություն, Արցախի Հանրապետություն, Միջազգային գիտաժողով, Կովկասը՝ մեր ընդհանուր տուն, գիտաժողովի հոդվածների ժողովածու, 2017, 225-230 էջ:
3. Սիգարետ և սիգար արտադրող կազմակերպությունների կողմից վճարվող հարկերն ու տուրքերը ՀՀ-ում, Այլընտրանք, գիտական հանդես, 2017#3, 108-113 էջ:
4. Ձեռնարկատիրության պետական կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում, Материалы международной научной конференции, посвященной проблемам обеспечения безопасности и качества пищевых продуктов, Ереван, НАУА, 2017,84-87 էջ :
5. Ձեռնարկատիրության զարգացման միջազգային փորձը սիգարետի և սիգարի արտադրության ոլորտում «Ֆիլիպ Մորրիս Ինտերնեյշնլ» ընկերության օրինակով, Տեղեկագիր, ՃՇՀԱՀ, ԵՐԵՎԱՆ, 1 (54) / 2017, 93-98 էջ:
6. Связи с обшественностью, проблемы и решения PR-организаций по производству сигарет и сигар в Армении, Сборник с доклади от IV международна научна конференция, Издательство «Наука и икономика», Варна-2018, 201-205 ст.
7. Cigarette and Tobacco Manufacturing Sector in the Economic System of Armenia and its Development Peculiarities, Agriscience and technology, ANAU, p. 43-48.
8. Սիգարետի և սիգարի արտադրության ներքին և արտաքին շուկաների առանձնահատկություններն ու վերլուծությունը, Այլընտրանք, գիտական հանդես, 2020#1, 37-47:

PARSYAN ANNA

ENTREPRENEURSHIP DEVELOPMENT ISSUES IN THE RA CIGARETTE AND CIGAR MANUFACTURING ORGANIZATIONS

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of economics in the speciality 08.00.02 - «Economics and Management of Economy and its Spheres»

The defense of the thesis will take place on 8 June 2021, at 14.00 o'clock at the Meeting of 002 specialized Council in Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address: 74 Teryan street, Yerevan, 0009.

SUMMARY

The Armenian cigarettes are currently in great demand in internal and external markets. They are distinguished by high qualitative properties, including color and strength. There are already a number of achievements recorded in the entrepreneurial activities of the cigarette and cigar manufacturing companies of Armenia. **The relevancy** of the subject is related to the share of tobacco products in the whole industrial production of the RA (the fixed index of 2 % in 2010 amounted to 9.3 % in 2019) and to the lack of fundamental research in the mentioned sector. The entrepreneurial activities of cigarette and cigar manufacturing companies are not only of economic but also of social significance for the country: thousands of job positions have been established and the unemployment rate has been somewhat reduced.

The main research objective is to identify the issues related to the entrepreneurial activities of cigarette and cigar manufacturing organizations, to recommend ways for their solution and for the overall efficiency increase of their activities.

In 2018, there were four cigarette and cigar producing companies in Armenia, while in 2019 they were already five.

The investigations and analyses conducted upon the current thesis research have resulted in a number of scientific findings, among which the following statements can be considered as a **scientific novelty**:

1.Based on the comprehensive investigations and analyses, the contemporary issues and the determinant factors of entrepreneurship development in the cigarette and cigar manufacturing companies of the Republic of Armenia have been disclosed.

2.The development trends of cigarette and cigar production, their export and import dynamics in the Republic of Armenia have been revealed, as well as the impact of tobacco plantation sizes and their yield capacity on the gross tobacco yield in the RA has been enhanced and their econometric evaluation has been given.

3. Based on the comprehensive evaluation and analysis of the resource potential and contemporary issues on entrepreneurship development in the cigarette and cigar production sector, the main improvement directions in the entrepreneurial activities of the RA cigarette and cigar manufacturing companies have been developed.

In the first chapter of the thesis work, the theory of entrepreneurship and the millennial history of entrepreneurial mindset development from the prehistoric times up to the modern periods, the principles, factors and motives of entrepreneurship, evaluation methodology of entrepreneurial activities and the entrepreneurial world practice of cigarette and cigar manufacturing organizations have been introduced.

In the second chapter of the thesis research, the cigarette and cigar production peculiarities and its economic feasibility in the RA, analysis of production and economic activities of cigarette and cigar manufacturing companies, the characteristic traits and analysis of internal and external markets of cigarette and cigar are touched upon.

The third chapter of the research work considers the state regulation ways of the mentioned sector, as well as the tools and mechanisms for enhancing the entrepreneurial risk management and issues on investment climate improvement.

The scientific and practical findings of the thesis research, which are published mainly in different scientific journals of the republic, can be beneficial for the economic activities of the RA cigarette and cigar manufacturing companies, for the researchers conducting more fundamental studies on the managerial issues, they can be also fit for finding other possible alternative solutions to the field-related problems, forecasting and prevention of adverse outcomes of entrepreneurial high-risk situations in this sector, for teaching and preparing professional personnel and for the establishment of new investment basis.

ПАРСЯН АННА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В СФЕРЕ ОРГАНИЗАЦИЙ ПРОИЗВОДЯЩИЙ СИГАРЕТ И СИГАР В РА

Автореферат дисертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика и управление хозяйством, его сферами»

Публичная защита диссертации состоится 8-ого июня 2021 года в 14.00 часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна, 74.

РЕЗЮМЕ

Сегодня армянские сигареты пользуются большим спросом на внутреннем и внешних рынках. Они отличаются высокими качественными показателями – цветом, крепостью. В процессе предпринимательской деятельности компаний, производящих в РА сигареты и сигары, уже имеется ряд примечательных достижений. **Актуальность** темы обусловлена удельным весом производства табачных изделий во всей промышленной продукции Армении (с 2% в 2010 году её доля достигла 9,3% в 2019 году), а также отсутствием фундаментальных исследований в этой сфере. Между тем, предпринимательская деятельность организаций, выпускающих сигары и сигареты, имеет для страны не только экономическую, но и социальную значимость: созданы тысячи рабочих мест, в определенной степени сократилась безработица.

Основная цель исследования – выявить ключевые вопросы предпринимательской деятельности предприятий, производящих в Армении сигары и сигареты, предложить пути решения этих вопросов и повышения эффективности работы.

В 2018 году в Армении было четыре крупных производителя сигар и сигарет. А в 2019 году их стало уже пять.

Проведенные исследования и анализ привели к ряду заслуживающих внимания научных результатов, из которых **научной новизной** можно считать следующие:

1. На основе проведенных всесторонних исследований и анализа выявлены имеющие проблемы, обусловливающие развитию предприни-

мательства в Республике Армения в сфере производства сигарет и сигар, и обусловливающие их факторы;

2. Выявлены тренды, характеризующие динамику производства сигарет и сигар в Республике Армения, их импорта и экспорта, а также степень воздействия уровня посевных площадей под табак и урожайности на валовый урожай табака в Армении, дана эконометрическая оценка этих процессов и показателей;

3. На основе всесторонней оценки и анализа ресурсного потенциала отрасли и текущих задач развития предпринимательской деятельности по производству сигар и сигарет в Армении, разработаны основные направления развития предпринимательской деятельности организаций, производящих в Армении сигареты и сигары.

В первой главе диссертации представлены теория предпринимательства и история развития предпринимательской мысли – с незапамятных времен до современных теорий, принципы, функции и мотивы предпринимательства, методология оценки эффективности предпринимательской деятельности и международный опыт компаний, производящих сигареты и сигары.

Во второй главе диссертации представлены особенности производства сигарет и сигар, его экономическая значимость в РА, анализ производственно-экономической деятельности организаций, производящих сигареты и сигары, особенности и анализ внутреннего и внешних рынков сигарет и сигар.

В третьей главе диссертации представлены пути государственного регулирования отрасли, инструменты совершенствования управления предпринимательскими рисками организаций, производящих в РА сигареты и сигары, а также ключевые вопросы, связанные с улучшением инвестиционной среды.

Научные и практические результаты диссертации, в основном, опубликованные в различных научных журналах, издающихся в республике, могут быть полезны тем, кто особенно основательно изучает ключевые вопросы экономической деятельности компаний, производящих в РА сигареты и сигары, и управления этими предприятиями, в аспекте применения возможных альтернативных решений этих вопросов, прогнозирования и предупреждения в отрасли негативных последствий предпринимательских рисковых ситуаций, обучения и подготовки профессиональных кадров, формирования новой инвестиционной базы.